ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 ապրիլի շաբաթ 2024
տպագրության ԺԴ տարի

58
(2908)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՂԱԶԱՐՅԱՆԻ ԿԻՆԸ «ԱՇԽԱՏՈՒՄ Է» ՔԱՂԱՔԻ ՏԱՐԲԵՐ ԾԱՅՐԱՄԱՍԵՐՈՒՄ

ՔՊ-ականները շարունակում են անխնա օգտվել ժողովրդի տված քվեի բարիքներից:

Հովիկ Աղազարյանի կինը՝ Մարգարիտ Աղազարյանը, եթե 2022 թվականին աշխատում էր ամուսնու հետ նույն հարկի տակ՝ ԱԺ-ում, ապա հաջորդ տարի՝ 2023-ին, նա գրանցված էր արդեն նաեւ էկոնոմիկայի նախարարության՝ գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ-ում, որը գտնվում է Էրեբունի համայնքում: Մնում է ճշտել, թե պատգամավորի կինը այս երկու հիմնարկներից ո՞րն է առավել նախընտրում. նրան մենք հաճախ տեսնում ենք Ազգային ժողովում, եւ պարզ է, որ չի հաճախում աշխատանքի մյուս գործատուի մոտ. հասկանալի է՝ չի կարող միաժամանակ գտնվել եւ ԱԺ-ում եւ Էրեբունում գտնվող ՊՈԱԿ-ում, ավելին՝ նա օրենքով չի կարող աշխատել 2 տարբեր պետական հիմնարկներում, եթե, իհարկե, չի դասավանդում դրանցից մեկում, որը տվյալ դեպքում բացառվում է:

Կոռուպցիան, ի գիտություն Նիկոլ Փաշինյանի, հենց սա է՝ պաշտոնական դիրքի չարաշահմամբ ընտանիքի բարեկեցության ապահովում:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ճշտել, թե ինչո՞ւ է Հովիկ Աղազարյանը հարվածային տեմպերով իր ողջ գերդաստանը տեղավորում է պետական համակարգում: Ի պատասխան մեր ճշտմանը՝ նա ասել է. «Մարդը իրավունք չունի՞ աշխատելու. զանգեք, իրենից հարցրեք: Հիմա իմ կինը աշխատում է, ինչ-որ ՊՈԱԿ կա, այդտեղ, անունն էլ չգիտեմ: Շարքային աշխատող է: ԱԺ-ում չի աշխատում: Դուք ո՞նց եք պատկերացնում՝ 2 տե՞ղ ա աշխատո՞ւմ: Ահագին ժամանակ ա չի աշխատում ԱԺ-ում»:

Գործադիր իշխանության անդամները տարբեր պատճառաբանություններով խուսափում են իշխանական պատգամավորների հետ փակ հանդիպումներից: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դեռ ապրիլի սկզբին կայացած բրյուսելյան հանդիպումից հետո ՔՊ-ական պատգամավորներն անհամբեր սպասում են Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպմանը՝ իրենց հուզող հարցերի պատասխանները ստանալու համար, վերջերս էլ այս ամենին ավելացել են նաեւ սահմանազատման անվան տակ տեղի ունեցող ապօրինի գործընթացները: Փաշինյանը, սակայն, արդեն մեկ ամիս է խուսափում է այդ հանդիպումներից: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ երեկ էլ ԱԺ-ում նախատեսված է եղել հանդիպում արտգործնախարար Արարատ Միրզոյանի հետ. սակայն, հանդիպումը չի կայացել: Արարատ Միրզոյանը պատճառաբանել է, թե առաջիկայում կարեւոր արտագնա այցեր ունի: Ստացվում է, որ իշխանության այն ներկայացուցիչները, որոնք ամենալավն են տիրապետում իրավիճակին, խուսափում են հանդիպումներից. հավանաբար չեն ցանկանում շատ փակագծեր բացել:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2023 թվականի ընթացքում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից ստացել եւ հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգ է մուտքագրել թվով 1080 ռեեստր՝ 3270 հայտարարատու անձանց պաշտոնների՝ 5009 փոփոխությունների վերաբերյալ: Ստացված ռեեստրներում առկա տվյալների համաձայն՝ փոփոխություններից 2734-ը վերաբերել են պաշտոնի ստանձմանը, 2275-ը՝ պաշտոնի դադարեցմանը: Եթե թվերը վերածենք տոկոսների, ապա հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնների փոփոխությունների 45%-ը պաշտոնի դադարեցում է, իսկ 55%-ը՝ պաշտոնի ստանձնում: Թվերի տարբերությունը հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել, որ պաշտոնի ստանձնման հիմքում, ըստ մեր հարյուրավոր հրապարակումների, խնամի-ծանոթ-բարեկամ սկզբունքն է գործել:



Ստորեւ ներկայացվող 16 էջանոց բողոքի մեջ ԲՏԱ «Հայփոստ» ՓԲԸ-ն, վիճարկելով իր նկատմամբ կազմված հերթական ՊԵԿ ակտը, գրեթե բառացի (տե՛ս բնօրինակը ArmLur.am կայքում) տարակուսում է, որ ՊԵԿ-ը իր կարգավիճակը պետք է հաշվի առնի, այլ կերպ ասած՝ ՔՊ-ական կառավարությունը դարերով գոյություն ունեցող՝ «օրենքի առաջ բոլորը հավասար են» սկզբունքը համարում է սխալ: Բարեբախտաբար, ՊԵԿ գանգատարկման հանձնաժողովը, որտեղ դեռեւս նախկին աշխատողներ կան, մերժել է «ազնվության եւ արդարության» լոզունգով եկածների դիմում-բողոքը: «Հայփոստ» ՓԲԸ շուրջ տեղի ունեցող իրադարձությունները ամբողջությամբ արտացոլում են այսօրվա պատկերը. օրենքի առաջ բոլորը հավասար են՝ բացի իշխանություններից:

ԶՐՈՒՅՑ

«ԱՆԱՐԳՈՒՄ ԵՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ». ՊԱՊՅԱՆ

Ծիծեռնակաբերդում ապրիլի 24-ին տեղի ունեցած միջադեպից հետո «Ժողովուրդ» օրաթերթը հարցազրույց է ունեցել «Ազգային ժողովրդավարական բեւեռ» շարժման անդամ Արա Պապյանի հետ:

-Պարոն Պապյան, երեկ տեսանք, թե «Ազգային ժողովրդավարական բեւեռ»-ի նախաձեռնող ցույցը ինչ միջադեպերով ուղեկցվեց, ոստիկանները բիրտ ուժի կիրառմամբ փորձում էին ցրել ցույցը, կան բերման ենթարկվածներ: Խնդրում եմ մանրամասնեք, թե երեկ ի՞նչ կատարվեց ակցիայի ժամանակ, եւ ինչո՞վ կբացատրեք ոստիկանների բիրտ ուժը:

-Նախ՝ երեկոյան միջադեպը նկարագրեմ, չնայած նրան, որ այդ պահին հրապարակում չեմ եղել: Ելույթից հետո գնացել էի. կարեւոր հեռախոսազանգ ունեի, բայց խոսել եմ ներկաների հետ, մանրամասն դիտել եմ շատ բաներ: Այդ հանրահավաքը եւ ցույցը լրիվ խաղաղ էին, որեւէ քայլ կամ բռնության կոչ չի եղել: Պարզապես տեղի է ունեցել հարձակում, որի ընթացքում բերման են ենթարկել 96 հոգու՝ ըստ իրեց տվյալների, որոնց տարել են 3-ից 4 ոստիկանական բաժիններ: Օրենքի համաձայն՝ մեծ մասին 3 ժամ անց բաց են թողել եւ միայն 7-8 հոգու ճակատագիրը հայտնի չէ: Կիսապաշտոնական աղբյուրներից սակայն, գիտենք, որ ուզում են տարբեր գործեր հարուցել՝ քրեական կամ վարչական:

-Տեղյա՞կ եք, թե ում:

-Ցուցակը ունենք, ավելի ուշ անուն առ անուն կնշենք:

-Պարոն Պապյան, ուշագրավ է, որ ոստիկանների կիրառած բիրտ ուժը հաջորդեց Ծիծեռնակաբերդում վարչապետի տիկնոջ մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպին: Կա տեսակետ, որ ոստիկանները փորձում էին վրեժ լուծել՝ վերոնշյալի համար:

-Նման ենթադրության համար հիմքեր կան, ինչը ավելի վատ է: Նշանակում է տվյալ անձինք պետական ապարատը յուրացրել են եւ օգտագործում են սեփական իշխանության համար: Ենթադրենք՝ որեւէ մեկը ուրիշ մեկին վիրավորել է. դրա համար ընթացակարգ կա: Դու դիմում ես դատարան, եւ դատարանը որոշում է՝ մեղավոր է տվյալ անձը, թե ոչ, եւ որն է մեղավորության չափը: Պատկերացրեք՝ փողոցում ինձ վիրավորեն եւ ես հարվածեմ: Ինձ կարդարացնե՞ն, ո՛չ: Կասեն՝ դիմեիր ոստիկանություն: Որեւէ մեկը Աննա Հակոբյանին չի թիրախավորել: Ես արդեն դուրս էի եկել, բայց ժողովուրդը, որքան լսել եմ, գնահատական է տվել այն պաշտոնյային, որին վարձել է աշխատելու համար:

-Այստեղ քննադատության առիթն այն է, որ միջադեպը տեղի ունեցած մանկահասակ երեխայի՝ վարչապետի դստեր ներկայությամբ է եղել:

-Մանկահասակ աղջիկ երեխային որեւէ մեկը չի թիրախավորել, եւ որեւէ խոսք չի ասել նրա հասցեին:

-Բայց ակնհայտ էր, որ նա այլայլվել է:

-Ես պատկերացնում եմ ինը եւ տասնմեկ տարեկան եղբայրների դեմքը, որոնց մորթում էին: Ի՞նչ է նշանակում՝ այլայլվել է: Այստեղ կա տեսակետ առ այն, որ դա արվել է դիտավորությամբ: Մենք ժամը 12-ին պիտի քայլեինք Մերգելյան ինստիտուտից եւ մեկ, մեկն անց կես հասնելու էինք Ծիծեռնակաբերդ: Հենց այս ժամանակ էլ եկել են՝ շատ լավ հասկանալով, որ իրենց հանդեպ վերաբերմունքը այդպես է լինելու: Հիմա հարց է առաջանում անչափահասի խնդի՞րն է այստեղ հարցը:

-Նկատի ունեք, որ դա դիտավորյալ մտածված է եղել՝ հրահրելու համար:

-Ես կարծում եմ, որ իրենք առնվազն տեսել են, որ Բեւեռն այնտեղ է եւ կարող էին տասը րոպե սպասել: Սակայն նրանք դիտավորյալ մտել են եւ հենց այն ժամանակ, երբ ասվում էր՝ «Նիկոլ Դավաճան», քանի որ վանկարկումները ավելի վաղ էին սկսել եւ Աննա Հակոբյանը հետո է եկել:

Ենթադրենք արարքը քրեորեն պատժելի է. դրա համար ընթացք կա: Իսկ երեխայի ներկայությունը ինչ է փոխում, դրանով սահմանափակվում է ազատության խոսքը: Երեխային ոչ ոք չի թիրախավորել, ընդհուպ Աննա Հակոբյանին էլ դիմել են տիկինով:

Արա Պապյանը նշել է, որ դա հենց այդ տեղն էր նման բացականչությունների համար, քանի որ այս մարդիկ հենց այդ զոհերի հուշատակն են անարգում եւ Հայոց Ցեղասպանությունը կասկածի տակ առնում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանություններին շատ է անհանգստացրել վերջին օրերին տարբեր քաղաքական ուժերի կազմակերպած ակցիաները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանություններին հատկապես ծանր են տարել ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պողոսյանի հիմնած «Հայոց համազգային միասնություն» կուսակցության քաղաքական ակտիվությունը եւ նրանց ակցիաները:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների՝ իրավապահներին հրահանգել են ուշադրության կենտրոնում պահել Միհրան Պողոսյանի թիմակիցներին, ավելին՝ ՊԵԿ-ն էլ իր հերթին վերջին օրերին ստուգումներ է անում նրա ընտանիքին պատկանող կամ կապ ունեցող բոլոր կազմակերպություններում:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց նաեւ ՊԵԿ, որտեղից ի պատասխան հայտնեցին. «Պետական եկամուտների կոմիտեի բոլոր ստուգումներն իրականացվում են ռիսկերի գնահատման հիման վրա: ՊԵԿ-ը, տարբեր գործիքակազմերի կիրառմամբ, մշտապես իրականացնում է տնտեսվարող սուբյեկտների հարկային ռիսկերի ուսումնասիրություններ եւ վերլուծություններ: Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի գործունեության մեջ ռիսկային երեւույթների արձանագրումից հետո ՊԵԿ-ը, ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, կարող է իրականացնել ստուգումներ: ՊԵԿ-ի օրինական գործողությունների հետ կապված շահարկումներն անընդունելի են»:

ՃԱՆԱՉԵԼ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չիլիի Խորհրդարանի ստորին՝ Ներկայացուցիչների պալատը ցեղասպանություն է ճանաչել 1915 թվականին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունները: Հարավամերիկյան երկրի խորհրդարանում նախօրեին ընդունված բանաձեւի դեմ Թուրքիան այսօր բողոքել է՝ հայտարարելով, թե այն «ուժ չունի»: Ըստ Թուրքիայի ԱԳՆ-ի մեկնաբանության՝ ցեղասպանության հանցագործությունը կարող է դիտարկվել միայն կոմպետենտ դատարանի կողմից:

ԴԵՍՊԱՆԸ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

Ֆրանսիայի խորհրդարանի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար Անն Լոուրենս Պետելն ասել է, որ Լեռնային Ղարաբաղում հայկական ներկայության բոլոր հետքերը ջնջելն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի վարչակարգի նախագիծն է:

Այս մասին նա գրառում է կատարել X-ի իր միկրոբլոգում՝ կից տեղադրելով տեսանյութ, թե ինչպես են ադրբեջանցիները հեռացնում Լեռնային Ղարաբաղի կառավարական շենքի հայատառ գրություններն ու զինանշանը:

«Լեռնային Ղարաբաղում հայկական ներկայության բոլոր հետքերը ջնջելն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի վարչակարգի նախագիծն է: Եկեղեցիներից, խաչքարերից եւ Արցախի Ազգային ժողովից հետո ադրբեջանցիներն այժմ գրոհում են կառավարության շենքը», - գրել է նա:

ՊԵՏՔ Է ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ԼԻՆԵՆ

Չինաստանն ու ԱՄՆ-ն պետք է լինեն գործընկերներ, ոչ թե հակառակորդներ, եւ կողմերը պետք է ընդհանուր լեզու փնտրեն: Այս մասին հայտարարել է Չինաստանի նախագահ Սի Ծինփինը Պեկինում ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ հանդիպման ժամանակ:

Ինչպես նշել է Սի Ծինփինը, որին մեջբերում է Չինաստանի Կենտրոնական հեռուստատեսությունը, 2024 թվականին լրանում է Չինաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 45 տարին:

«45 տարվա ընթացքում Չինաստան-ԱՄՆ հարաբերություններն անցել են բազմաթիվ փորձությունների միջով, ինչը մեզ շատ կարեւոր դասեր է տվել՝ երկու երկրները պետք է լինեն գործընկերներ, ոչ թե հակառակորդներ: Մենք պետք է ընդհանուր լեզու փնտրենք, այլ ոչ թե մրցակցության ոլորտներ», - հավելել է պետության ղեկավարը:

ՏՈՒԺՈՂ Է ՃԱՆԱՉՎԵԼ

Պահեստազորի գնդապետ Միհրան Մախսուդյանը տուժող է ճանաչվել երեք օր առաջ Բագրատաշենի հարակից մայրուղում տեղի ունեցած դեպքերի առնչությամբ:

Նա մայրուղին փակած ցուցարարների ու ոստիկանների միջեւ բախման ընթացքում բերման ենթարկվելիս վնասվածքներ էր ստացել, ոստիկանություն հասնելուց հետո ինքնազգացողությունը վատացել էր ու տեղափոխվել հիվանդանոց, որտեղ ախտորոշել են ուղեղի ցնցում եւ սալջարդ: Մախսուդյանը բազմաթիվ կապտուկներ ունի թեւերին ու մեջքին:

Քննչական կոմիտեից «Ազատության»-ը հայտնեցին, որ Նոյեմբերյանի հիվանդանոցից ստացված հաղորդման հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ՝ պաշտոնատար անձանց կողմից խոշտանգման հոդվածով: Քննությամբ կպարզվեն հանգամանքները, հավելեցին ՔԿ-ից:

ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ ՀՀ կառավարությունը հասել է մի կետի, որտեղ Հայաստանի ապագայի շատ կոնկրետ նախագիծ է դնում սեղանին: Փաշինյանն այս մասին ասել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամների հետ հանդիպմանը: «Եկել ենք մի տեղ, որտեղ մենք Հայաստանի ապագայի շատ կոնկրետ նախագիծ ենք դնում սեղանին: Եվ սա շատ կարեւոր փուլ է: Եվ մենք այս փուլում պետք է շատ ակտիվ լինենք՝ որպես կուսակցություն»,- ասել է վարչապետը:

Խոսելով Տավուշի մարզի որոշ հատվածներում Ադրբեջանի հետ սահմանի սահմանազատման՝ արդեն մեկնարկած գործընթացի մասին՝ Փաշինյանն ասել է, որ դա շատ ցավոտ հարց է՝ կա ճանապարհի, տների հետ կապված խնդիր, սակայն արձանագրել է, որ հիմա լուծում են ոչ թե որեւէ գյուղի, որեւէ ճանապարհի կամ որեւէ տան, այլ առաջիկա տասնամյակներում Հայաստանի լինելության հարցը:

ԳԱՆՁՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

Առաջարկվում է նոր խմբագրմամբ շարադրել «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված մաքսային գործառնությունների համար վճարվող պետական տուրքի դրույքաչափերին վերաբերող հոդվածը: Առաջարկվում է այդ նորմերը համապատասխանեցնել ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված դրույքաչափերին: Վերջին տարիների ընթացքում դրանք, ըստ էության, փոփոխությունների չեն ենթարկվել:

Նախատեսվում է մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների համար գանձվող պետական տուրքի տարանջատում՝ ըստ մաքսային հայտարարագրերի տեսակների: Կսահմանվի պետական տուրք տեղորոշող սարքերով տրանսպորտային միջոցների երթուղու դիտարկման համար, մաքսային փորձաքննությունների իրականացման համար կսահմանվեն պետական տուրքի դրույքաչափեր: Պետական տուրքի յուրաքանչյուր դեպքի համար նախատեսվում է պետական տուրքի վճարման ժամկետների սահմանում: Կհստակեցվի պետական տուրքից ազատման արտոնությունների շրջանակը:

«Պետական տուրքի մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները եւ լրացումներն ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում քննարկման է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը: Հարցը քննարկվել է առաջին ընթերցմամբ:

Ըստ զեկուցողի՝ առաջարկվող կարգավորումները կնպաստեն մաքսային ձեւակերպումների գործընթացի պարզեցմանը, միատեսակ վարչարարության իրականացմանը:

Կփոփոխվեն ժամանակավոր պահպանության համար գործող դրույքաչափերը. դրանք կսահմանվեն ըստ քաշի: Գործող 4 տիպի հայտարարագրերից յուրաքանչյուրի համար կնախատեսվեն առանձին դրույքաչափեր՝ կախված ապրանքի քաշից: Վերանայվում է մաքսային ուղեկցման համար սահմանված պետական տուրքի դրույքաչափը: Լրացուցիչ արտոնությամբ մինչեւ ապրանքի ժամանումը նախնական տեղեկատվություն ներկայացնող արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողները կազատվեն երկրի ներսում տարանցման հայտարարագիր լրացնելու համար սահմանված պետական տուրքից:

Օրինագիծն արժանացել է հանձնաժողովի դրական եզրակացությանը:

Երկրորդ ընթերցմամբ են քննարկվել եւ դրական եզրակացություն ստացել «Պետական տուրքի մասին» եւ «Ավիացիայի մասին» օրենքներում առաջարկվող կարգավորումները: Առաջինից երկրորդ ընթերցում տեխնիկական փոփոխություններ են կատարվել:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գեւորգյանի ներկայացմամբ երկրորդ ընթերցմամբ քննարկվել են նաեւ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները:

Զեկուցողի խոսքով առաջինից երկրորդ ընթերցում նախագծում կատարվել են տեխնիկական փոփոխություններ: Լրամշակված նախաձեռնությունը եւս արժանացել է հանձնաժողովի հավանությանը:

ԿԱՐԵՎՈՐ

ԻՆՉ Է ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՄ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ադրբիջանաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Եվրոպական միության Հայաստանի գրասենյակում հյուրընկալվեցի ԵՄ արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Մարագոսին, ՀՀ-ում ԵՄ հատուկ ներկայացուցչի գրասենյակի քաղաքական հարցերով խորհրդական Սիլվիա Մարիա Ջեհեին եւ Հայաստանում ԵՄ պատվիրակության քաղաքական պատասխանատու Մարիա Պապամիխայլին: Խոսեցի Տավուշում առկա իրավիճակի, այնտեղից սկսվող դելիմիտացիայի եւ դեմարկացիայի հարցերի մասին: Իմ մտահոգությունն արտահայտեցի Ոսկեպարի 7-րդ դարի սուրբ Աստվածածին հայկական եկեղեցու ճակատագրի համար. չնայած փոխվարչապետի գրասենյակը փոխանցել էր, որ մնալու է Հայաստանի տարածքում, այդքան էլ հավատարժան չէ, որովհետեւ մենք նման խոստում լսեցինք նաեւ Արցախի պատերազմից հետո Դադիվանքի մասին, երբ ասում էին, որ Դադիվանքի ճանապարհը կմնա հայկական կողմին, եւ կարող ենք անխոչընդոտ այցելել, սակայն չեղավ: Դեսպանի հետ զրույցում բարձրացրի Եվրամիության դիտորդների հարցը, ովքեր թվով 200-ն են:

Նշեցի, որ բնակվելով ավելի ապահով տեղերում, անհնար է իրենց կողմից դիտարկել իրավիճակը եւ կրակոցների պահին լինել դեպքի վայրում. նրանք հաճախ արձագանքում են կրակոցներին կամ որեւէ միջադեպի կատարվելուց ժամեր անց կամ մեկ օր հետո: Խոսելով արցախահայության մասին՝ ընդգծեցի նրանց վերադարձի հարցի կարեւորությունը՝ միջազգային երաշխիքների պայմաններում: Քննարկեցինք նաեւ վիզաների ազատականացման հարցը: Նշեցի, որ հաճախ են հայերը բախվում դժվարությունների վիզաներ ստանալու հարցում:

Անդրադարձա նաեւ Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք ժողովրդավարության սպառնալիքներին, այդ թվում՝ Հայաստանում առկա քաղբանտարկյալների խնդիրներին: Դեսպանը մեկնաբանեց, որ ԵՄ-ն սկզբունքային նշանակություն է տալիս Ալմա-Աթայի հռչակագրին՝ որպես կողմերի միջեւ սահմանազատման եւ սահմանագծման հիմք, եւ ողջունում է այդ գործընթացի մեկնարկը: Ինչ վերաբերում է Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելությանը, պարոն Մարագոսն ընդգծեց, որ այն կենտրոնացած է խաղաղությանն ու կայունությանը աջակցելու իր մանդատի իրականացման վրա, եւ դիտորդների ներկայությունն արդեն տվել է շատ կոնկրետ արդյունքներ՝ միջադեպերի կրճատման առումով:

«Սա քաղաքացիական առաքելություն է: Նրանք իրենց մանդատի հիման վրա վերահսկում են իրավիճակը: Բացի այդ, ժողովրդավարական հասարակությունում օրենքի գերակայությունը պահպանելու համար նրանք, ում վստահված է հասարակության ոստիկանական գործը, իրենք պետք է ենթակա լինեն օրենքի առջեւ պատասխանատվության: ԵՄ-ն վերահսկում է իրավիճակը եւ կապի մեջ է ՄԻՊ գրասենյակի հետ»,- նշել է իր խոսքում ԵՄ արտակարգ եւ լիազոր դեսպանը»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍՏԱՆՁՆԵԼ ԵՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԵՐԸ

Նախարար Անահիտ Ավանեսյանն ու նրա տեղակալ Լենա Նանուշյանն առողջապահական ոլորտում առկա խայտառակ խնդիրները թողած՝ լծվել են Նիկոլ Փաշինյանի պաշտպանությանն ու քաղաքականության մեջ են մխրճվել:

Օրեր առաջ Անահիտ Ավանեսյանը, անդրադառնալով Տավուշում տեղի ունեցող իրադարձություններին, հայտարարել էր, թե կիսում է իր քաղաքական թիմի մոտեցումները. «Ես քաղաքական թիմի ներկայացուցիչ եմ, միացել եմ այս քաղաքական թիմին եւ մինչեւ քաղաքական թիմին միանալն էլ՝ 2003 թվականից եղել եմ ընդդիմադիր հայացքներ ունեցող անձ եւ ճանապարհ եմ անցել, այսօր էլ կիսում եմ իմ քաղաքական թիմի հայացքները, մոտեցումները եւ որոշումները»:

Հիմա էլ նրա տեղակալ Լենա Նանուշյանը, հետեւելով ղեկավարի օրինակին, որոշել է քաղաքական հարցեր լուծել ու քննադատել է ընդդիմադիրներին. «Այս օրերին գոռող-գոչող քաղաքական ուժերը սահմանազատմանը որպես այլընտրանք առաջարկ արե՞լ են»,-գրել է Նանուշյանը:

Այսինքն, չնայած որ առողջապահական ոլորտում բարձիթողի վիճակ է, մի շարք խնդիրներ կան, իսկ ՔԿ-ն ընդամենը օրեր առաջ էր խուզարկություններ արել

Առողջապահության նախարարությունում, աշխատակցի էին ձերբակալել, բայց այս ամենը մի կողմ թողած՝ Ավանեսյանն ու Նանուշյանը քաղաքական հարցեր են լուծում ու Նիկոլ Փաշինյանի պաշտպանի դերն են ստանձնել: Հավանաբար, առկա դժգոհությունների ֆոնին նախարարը որոշել է բարձրանալ Նիկոլ Փաշինյանի աչքին:

Ուշագրավ է, որ նույն Լենա Նանուշյանը, որը հիմա ջանասիրաբար քննադատում է նախկին իշխանություններին, նրանք օրոք ԱԺ-ում պաշտոն է զբաղեցրել: Նա 2003-2012 թվականներին եղել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առողջապահության մշտական հանձնաժողովի փորձագետ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿԿՆՔԵՆ

Բեռլինում Ալիեւի հետ հանդիպումից հետո՝ Գերմանիայի կանցլերը տեղեկացրել է, որ Ալիեւի հետ հանդիպմանը քննարկվել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման հարցը. «Լավ է, որ երկու երկրների ղեկավարները երկխոսության մեջ են: Ինձ հետ ձեր վերջին հանդիպման ժամանակ ասացիք, որ բոլոր հարցերը կլուծվեն քննարկումների միջոցով: Ես ակնկալում եմ, որ երկու կողմերն էլ անհրաժեշտ կառուցողականություն կցուցաբերեն», - ասել է Օլաֆ Շոլցը:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԽՈՒՄ Է ԵՄ ՇԱՀԵՐԻՑ

Գերմանիայի Բունդեսթագի Եվրոպական միության հարցերով հանձնաժողովի նախագահ Թոնի Հովրեյթերը կարծիք է հայտնել, որ մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանի Եվրամիության անդամ դառնալը բխում է հենց ԵՄ-ի անվտանգության քաղաքականության շահերից:

Այս մասին նշվում է «Կանաչները Բունդեսթագում» X-ի միկրոբլոգում տարածած հաղորդագրության մեջ:

«Եվրամիության անդամ դառնալը բխում է ոչ միայն Ուկրաինայի, բալկանյան երկրների, Վրաստանի, Հայաստանի եւ Մոլդովայի Հանրապետության շահերից, այլ նաեւ մեր իսկ անվտանգության քաղաքականության շահերից»,- գրել է նա:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸ

ՀՀ Քննչական կոմիտեի՝ ոստության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում շարունակվում է 2020թ. նոյեմբերի 10-ին Երեւան քաղաքում կազմակերպված զանգվածային անկարգությունների վերաբերյալ քրեական վարույթով ակտիվ նախաքննությունը:

Կատարված բազմաթիվ քննչական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում հիմնավորվել է, որ եղբայրներ Ս.Ի-ն եւ Դ.Ի-ն 2020թ. նոյեմբերի 10-ին տեղեկանալով, որ նույն թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմը դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ ձեռք բերված համաձայնությունը հրապարակվելուց հետո ՀՀ կառավարության շենքի մոտ բազմություն է հավաքվել եւ կատարվում են զանգվածային անկարգություններ, գնացել են նշված վայր ու միացել զանգվածային անկարգությունների մասնակիցներին:

Մասնավորապես՝ Ս.Ի-ն եւ Դ.Ի-ն, զանգվածային անկարգության մյուս մասնակիցների հետ հաղթահարելով ոստիկանական պատնեշը, մոտեցել են ՀՀ կառավարության շենքի մուտքի դռանը, որից հետո, Ս.Ի-ն, լրացնելով այլ անձանց գործողությունները, ոտքերով մի քանի անգամ հարվածել է ՀՀ կառավարության շենքի մուտքի դռանը, ինչի հետեւանքով այն նախ վնասվել, ապա բացվել է: Դրանից հետո, Ս.Ի-ն եւ Դ.Ի-ն, զանգվածային անկարգության այլ մասնակիցների հետ ապօրինի մուտք են գործել ՀՀ կառավարության թիվ 1 շենք, որտեղ շարունակել են ջարդերով, գույք ոչնչացնելով եւ վնասելով զուգորդված զանգվածային անկարգությունները: Արդյունքում ջարդվել են կառավարության անդամների եւ աշխատակազմի մի շարք աշխատասենյակների դռները, առանձնապես խոշոր չափերով վնասվել եւ ոչնչացվել է ՀՀ գործադիր իշխանության բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ պետական եւ մասնավոր գույքը: Այդ ամենով խաթարվել է ՀՀ կառավարության գործունեությունը, վտանգվել հասարակական անվտանգությունը:

Մասնավորապես՝ Ս.Ի.-ն, Դ.Ի.-ի եւ զանգվածային անկարգության այլ մասնակիցների հետ բարձրանալով շենքի 3-րդ հարկ, վնասելու դիտավորությամբ ցատկել եւ ոտքով մեկ անգամ հարվածել է «Կարմիր դահլիճ» անվանումով սրահի մուտքի երկփեղկ դռներին, այնուհետեւ մոտենալով նույն հարկում տեղակայված աշխատասենյակի ընդունարանի պատին ամրացված ցուցանակին՝ քաշել եւ պոկել է այն, թքել դրա վրա, գցել գետնին եւ ոտքերով հարվածելով վնասել այն, որից հետո հանցակիցների, այդ թվում՝ Դ.Ի.-ի հետ մուտք է գործել նույն հարկում գտնվող «Սպիտակ դահլիճ» անվանումը կրող սրահ եւ վնասելու դիտավորությամբ ոտքով հարվածել է սրահում գտնվող փակ դռներից մեկին:

Այնուհետեւ Ս.Ի.-ն փորձել է քաշելով պոկել ՀՀ կառավարության շենքի աշխատասենյակների ցուցանակները, սակայն տեսնելով, որ չի կարողանում, վերցրել է պատին ամրացված կրակմարիչը, այլ անձանց, այդ թվում՝ Դ.Ի.-ի հետ դրանով հարվածելու եւ ձեռքով քաշելու միջոցով պատից պոկել եւ գետնին են գցել ցուցանակները՝ վնասելով դրանք:

Բացի դրանից, նախաքննությամբ հիմնավորվել է, որ Ս.Ի.-ն, զանգվածային անկարգությունների մեկ այլ մասնակցի հետ նախնական համաձայնությամբ, եւ Դ?Ի.-ն իր հերթին՝ առանձին, հաստատապես գիտակցելով իրենց գործողությունների բացահայտ բնույթը եւ ներկաների կողմից դրա հանցավորությունը գիտակցելու հանգամանքը, հափշտակել են ՀՀ կառավարության աշխատակազմի հաշվեկշռում գտնվող ՀՀ դրոշներ:

Նկարագրված արարքները կատարելու համար Ս.Ի.-ի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով եւ 225-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Դ.Ի.-ի նկատմամբ՝ նույն օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

Հետախուզման մեջ գտնվող Ս.Ի.-ն հայտնաբերվել եւ ներկայացվել է վարույթ իրականացնող մարմնին: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, իսկ Դ.Ի-ի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերը, նրանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

Մինչ օրս 2020 թ. նոյեմբերի 10-ին Երեւան քաղաքում կազմակերպված զանգվածային անկարգություններին մասնակցելու մեղադրանքով դատարան է ուղարկվել 39 անձանց վերաբերյալ քրեական վարույթ:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

12 ՄԼՐԴ ԴՐԱՄԻ ՎՆԱՍ Է ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունում ամփոփվել են 2024թ. 3 ամիսների ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքները՝ այդ թվում նաեւ հանցագործությամբ պետությանը, համայնքներին, քաղաքացիական եւ իրավաբանական անձանց պատճառված վնասների հայտնաբերման եւ վերականգնման ուղղությամբ: Պարզվել է, որ 2024թ. առաջին եռամսյակում նախաքննությունն ավարտված քրեական վարույթներով բացահայտված՝ պատճառված ընդհանուր գույքային վնասը կազմել է 6.246.018.000 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 5.043.265.000 ՀՀ դրամը կամ 80.7%-ը:

Մասնավորապես՝

Պետությանը պատճառված վնասը կազմել է 5.367.598.000 ՀՀ դրամ, որից նախաքննության փուլում վերականգնվել է 4.908.355.000 ՀՀ դրամը կամ 91.4%-ը: Համայնքին պատճառված 9.840.000 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 2.630.000 ՀՀ դրամը կամ 26.7%-ը:

Իրավաբանական անձանց պատճառված 216.987.000 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 50.873.000 ՀՀ դրամը կամ 23.4%-ը:

Ֆիզիկական անձանց պատճառված 651.593.000 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 81.407.000 ՀՀ դրամը կամ 12.4%-ը:

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՂԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ Պարույր Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա չհանդիսանալով փաստաբան եւ ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, չունենալով փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Արաբկիր նստավայրին կից Երեւանի Հր. Ներսիսյան 10/5 հասցեում գտնվող մեկ հարկանի շենքին փակցրել է գովազդային վահանակ «Օմերտա» փաստաբանական գրասենյակ անվամբ, ինչպես նաեւ փաստաբանի կարգավիճակ չունենալով, «Փաստաբանության մասին» օրենքի եւ փաստաբանի վարքագծի կանոնագրքի խախտմամբ հիմնել է «Օմերտա փաստաբանական գրասենյակ» անվանումը կրող ՍՊ ընկերությունը, որի անվան ներքո խաբեության եւ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակություն կատարելու դիտավորությամբ ներգրավելով հաճախորդների կատարել է մանր եւ խոշոր չափերի խարդախություններ:

ՄԻԵԴ–ՈՒՄ ՀԱՅ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ հաստատվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի կողմից առաջադրվող դատավորների ցանկը.

. Վահե Գրիգորյան՝ Սահմանադրական դատարանի փոխնախագահ

. Նորա Կարապետյան՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ

. Վիգեն Քոչարյան՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԵՔԵՆԱ Է ԿՈՂԱՇՐՋՎԵԼ

Ապրիլի 26-ին, ավտովթար է տեղի ունեցել Տավուշի մարզում: Ժամը 12:10-ի սահմաններում Կոտայքի մարզի բնակիչ Շուշանիկ Բ.-ն իր վարած «Toyota» մակնիշի ավտոմեքենայով Դիլիջան քաղաքի Կամո փողոցում դեռեւս անհայտ հանգամանքներում բախվել է աջ գոտում կայանված «Mercedes» մակնիշի ավտոմեքենային:

Բախման հետեւանքով «Toyota»-ն գլխիվայր շրջվել է:

Ըստ նախնական տեղեկությունների՝ բարեբախտաբար տուժածներ չկան:

Հրշեջ-փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան, տեղում իրականացրել հերթապահություն, այնուհետեւ քաղաքացիների ու պարեկների օգնությամբ դարձի են բերել ավտոմեքենան:

Վթարի փաստով ՊԾ Տավուշի մարզի գումարտակում փաստաթղթեր են ձեւակերպվում, որտեղ պարզվում է կայանված «Mercedes»-ի վարորդի ինքնությունը:

«Toyota»-ի վարորդը ենթարկվել է սթափության փորձաքննության, եղել է սթափ:

Մ. ԱՍԼԱՆՅԱՆԸ ԿՄՆԱ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ

ՀՀ հակակոռուպցիոն դատարանը՝ դատավոր Սարգիս Դադոյանի նախագահությամբ, այսօր որոշեց մերժել Վանաձորի նախկին քաղաքապետ Մամիկոն Ասլանյանի խափանման միջոց կալանքը փոխելու վերաբերյալ երեկ ներկայացված միջնորդությունը:

«Քաղբանտարկյալ Մամիկոն Ասլանյանը, որ 2 տարի 4 ամիս է՝ գտնվում է անազատության մեջ, դեռ 2021 թվականից, շարունակելու է մնալ կալանավորված»,- այսօր վաղ առավոտյան ուղիղ եթերով հայտնեց իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանը:

Ռուբեն Մելիքյանի խոսքով, Ասլանյանի պաշտպանները երեկ նախկին քաղաքապետին ազատ արձակվելու միջնորդություն ներկայացրին, քանի որ գործով 30 վկայի հարցաքննությունն ավարտվեց: Իրավապաշտպանը հիշեցրեց, որ դատարանի որոշմամբ՝ Ասլանյանը շարունակում էր մնալ անազատության մեջ. «Բոլոր երեսուն վկաներին լսել են, ակնհայտ է, որ անազատության մեջ պահելու հիմքը վերացել է, մարդուն պետք է ազատ արձակեն, բայց չէ, դատարանը հիմա էլ որոշում է՝ եւս 7 վկա պետք է հարցաքննի, բայց այս հանգամանքը հիմք ընդունել, ասել՝ չէ հիմա էլ այս 7 վկայի վրա կարող է ազդեցություն թողնել, չեղավ, սա տպավորություն կարող է ստեղծել, որ այս 7 վկան ոչ թե ճշմարտությունը բացահայտելու համար հայտնվեցին դատական գործում, այլ որ արհեստական հիմք ստեղծվի Ասլանյանին անազատության մեջ պահելու համար»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 25-ից 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 95 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՍԱԿՐԱՎՈՐԸ ՎԻՐԱՎՈՐՎԵԼ Է

Ապրիլի 25-ին Տավուշի մարզի Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանց-Բերքաբեր հատվածում ականազերծման աշխատանքներ կատարելիս ականապայթյունային վնասվածք է ստացել պայմանագրային զինծառայող, 1980 թվականին ծված Գ. Մարդանյանը. Իջեւանի բժշկական կենտրոնից տեղեկացանք, որ ականի պայթյունից սակրավորի աջ ոտնաթաթը պոկվել է: Նրան նույն օրը՝ ապրիլի 25-ին, հետագա բուժման համար Իջեւանի ԲԿ-ից տեղափոխել են Երեւան:

ՈՒՐԱՅԵ՞Լ ԵՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքի «Ընդհանուր տեղեկություններ» բաժնի «Տավուշի մարզի պատմամշակութային հուշարձանները» ենթաբաժանում ընդհանրապես տեղեկություններ չկան Ոսկեպարի 7-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցու, Կողբի Մշկավանքի, Բարեկամավանի նախաքրիստոնեական շրջանի Բարձրյալ Խաչ դամբարանի մասին: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Ն. Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին ապրիլի 17-ին տեղեկատվական հարցում ենք ուղարկել, թե ինչու նշանավոր հնամենի այդ հուշարձանների մասին մարզպետարանի կայքի նշված ենթաբաժնում տեղեկություններ չկան, սակայն մինչեւ հիմա պատասխան չենք ստացել:

ՄԱԽՍՈՒԴՅԱՆԻՆ ԵՆ ՎԱՐԿԱԲԵԿՈՒՄ

Տավուշի մարզից տարածքները միակողմանի կերպով Ադրբեջանին հանձնելու դեմ պայքարողների առաջամարտիկներից է Ոսկեպար գյուղի բնակիչ, պահեստազորի գնդապետ Միհրան Մախսուդյանը; Տավուշից 4 գյուղերի տարածքները հանձնելու դեմ պայքարող, ՀԱԵ Տավուշի թեմի առաջնորդ, Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանին համացանցում վարկաբեկելուց հետո հիմա էլ Միհրան Մախսուդյանին են վարկաբեկում: Համացանցում ՔՊական իշխանության նոյեմբերյանցի կողմնակիցների կողմից տարածվում է հատված՝ հարցազրույցից, որտեղ գունատ դեմքով մեկը ստուդիայում, գլխարկը գլխին նստած, հարցազրույց տալով՝ ասում է, որ ինքը 44-օրյա պատերազմի ժամանակ ղեկավարել է Սարուշենի պաշտպանությունը, հանդիպել է Արցախ եկած հրամանատար Միհրան Մախսուդյանին, վերջինս Արցախից «փախել է»: Հարցազրույց տվողը Միհրան Մախսուդյանին անվանում է «կապիկ», ասում, որ նա «նինձիայի» շարժումներ է արել եւ այլն: Եթե Արցախում պատերազմի ժամանակ հրամանատար եղած Մ. Մախսուդյանը պատերազմից փախած լիներ, ինչո՞ւ դրա համար անցած երեքուկես տարում նրա նկատմամբ քրեական գործ չեն հարուցել: Նա 2-րդ բանակային կորպուսի շտաբի պետն էր, պաշտոնից ազատել են 2023թ. հունվարի 19-ին՝ Ազատ գյուղի կացարանում 15 զինվորի մահվան ելքով հրդեհից հետո: Մ. Մախսուդյանը հայտարարել է , որ այդ դեպքի ժամանակ ինքը զինվորական հոսպիտալում է եղել: Միհրան Մախսուդյանի եղբայրը, հայրն ու պապը զոհվել են Ոսկեպարում 1990-կան թվականների ազատամարտի ժամանակ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԼՈՒՍԱՎՈՐ ԱՊԱԳԱՅԻ ՀՈՒՅՍ

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը ապրիլի 26-ին ներկայացրել է Մարդու իրավունքների եւ մարդասիրության ֆորումի բանախոսներին: Համաշխարհային մտքի առաջնորդները եւ համայնքներում էական փոփոխություն իրականացնող մարդիկ հանդիպելու են «Ավրորայի» միջոցառումների շրջանակում՝ մայիսի 8-10-ը Լոս Անջելեսում:

Քանի որ հակամարտություններն ու պատերազմները շարունակվում են աշխարհի բազմաթիվ հատվածներում, այս տարի միջոցառումների առանցքում «լուսավոր ապագայի հույսն է՝ նույնիսկ ամենադժվարին ժամանակներում»: Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝միայն 2024 թվականին աշխարհում մոտ 300 միլիոն մարդ մարդասիրական օգնության եւ պաշտպանության կարիք կունենա՝ հակամարտությունների, կլիմայի փոփոխությամբ եւ այլ հանգամանքներով պայմանավորված արտակարգ իրավիճակների պատճառով:

«Մենք անհամբեր սպասում ենք, թե երբ կհամախմբենք մեր ժամանակի լավագույն փորձագետներին՝ համաշխարհային առաջնորդներին, որոնք կներկայացնեն մարդասիրության եւ մարդու իրավունքների ոլորտում իրենց ունեցած փորձն ու գիտելիքները՝ լուծելու հրատապ խնդիրները, որոնց բախվում ենք այսօր», - ասել է «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության գործադիր տնօրեն Արմինե Աֆեյանը:

Խաղաղության միջազգային ինստիտուտի նախագահ եւ գործադիր տնօրեն Ջեյդ բին Ռաադ ալ Հուսեյնը հանդես կգա որպես հիմնական բանախոս՝ ներկայացնելով իր տեսակետը, թե որքան կարեւոր է լինել անդրդվելի մարդու իրավունքների պաշտպանության հարցում այն ժամանակ, երբ միլիոնավոր մարդկանց իրավունքներ շարունակում են խախտվել ավտորիտար եւ պոպուլիստական ռեժիմների կողմից:

Նախատեսվում է, որ ավելի քան 55 բանախոս, այդ թվում Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, Պուլիցերյան մրցանակի դափնեկիրներ, միջազգային բժիշկներ եւ հանրային առողջապահության եւ տեխնոլոգիական ոլորտի առաջնորդներ կխոսեն արհեստական բանականության զարգացման պայմաններում մարդու իրավունքների հարցերը դիտարկելու հրատապության մասին:

2024 թ. «Ավրորայի» հիմնական միջոցառումների շրջանակում Մարդու իրավունքների եւ մարդասիրության ֆորումը տեղի կունենա Կալիֆորնիայի համալսարանի իրավագիտության դպրոցի «Խոստում» մարդու իրավունքների ինստիտուտի հետ համագործակցությամբ:

««Խոստում» ինստիտուտը մարդու իրավունքների կրթական, հետազոտական, ազդեցության եւ մտքի առաջնորդության համաշխարհային ճանաչում ունեցող հաստատություն է», - նշել է «Խոստում» ինստիտուտի գործադիր տնօրեն, պրոֆեսոր Հաննա Գերին:

Մայիսի 9-ին «Ավրորա» մրցանակի շնորհման արարողության ժամանակ կհայտարարվի 2024 թ. դափնեկրի անունը, որին կշնորհվի 1 միլիոն ԱՄՆ դոլար պարգեւ: Մրցանակը կշնորհվի «Ավրորայի» երեք հերոսներից մեկին, որոնք օգնության ձեռք են մեկնում ամենադժվարին իրավիճակում գտնվող մարդկանց իրենց համայնքներում:

Մարդու իրավունքների եւ մարդասիրության ֆորումի ընթացքում տեղի կունենան բազմաթիվ քննարկումներ. կրթության իրավունք, բռնի տեղահանություն եւ փախստականների խնդիրներ, կլիմայի փոփոխության ազդեցություն, գենդերային արդարություն, արհեստական բանականություն, համաշխարհային առողջապահական ճգնաժամ եւ այլ թեմաներ: Կցուցադրվի նաեւ բազմաթիվ մրցանակների արժանացած «Ավրորայի լուսաբացը» անիմացիոն վավերագրական ֆիլմը:

Մայիսի 10-ին լոսանջելեսյան միջոցառումները կամփոփեն «Ավրորայի» համահիմնադիր Նուբար Աֆեյանը եւ «Խոստում» ինստիտուտի համահիմնադիր Էրիկ Էսրայիլյանը՝ հատուկ հանդիպման ժամանակ:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃԱՐՈՎԻ

Ապրիլի 25-ին Վենետիկը՝ մոլորակի ամենահայտնի զբոսաշրջային քաղաքներից մեկը, փորձարկում է սկսել՝ զբոսաշրջիկները քաղաք մեկօրյա այցելության համար կվճարեն 5 եվրո մուտքավճար:

Հինգշաբթի օրը Վենետիկն առաջին անգամ սկսեց քաղաք մուտք գործելու համար 5 եվրո գանձել այն զբոսաշրջիկներից, ովքեր ժամանում են այնտեղ մեկօրյա ճամփորդության եւ չեն գիշերում: Վենետիկ վճարովի մուտքը գործում է 8:30-ից 16:00-ը:

Այս նախագիծը մշակվել եւ հայտարարվել է նախապես՝ պիկ օրերին զբոսաշրջիկների կուտակումները նվազեցնելու եւ իրավիճակն ավելի տանելի դարձնելու ակնկալիքով՝ թե՛ քաղաքացիների, թե՛ այցելուների համար:

Վենետիկի երկաթուղային կայարաններում հայտնվել են մեծ ցուցանակներ, որոնց վրա նշված են գալիք ամիսների այն օրերի ամսաթվերը, երբ քաղաքում մնալը վճարովի է լինելու, ինչպես նաեւ առանձնացվել են նոր առանձին ելքեր դեպի քաղաք՝ զբոսաշրջիկների եւ նրանց համար, ովքեր ապրում, սովորում կամ աշխատում են Վենետիկում: Ցուցանակների մոտ հերթապահող աշխատակիցներ կան, ովքեր այցելուներին զգուշացնում են նոր կանոնների մասին եւ օգնում ներբեռնել QR կոդը՝տոմս գնելու համար:

Վճարովի տոմս չունենալու դեպքում զբոսաշրջիկները կվճարեն 50 եվրո տուգանք:

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ

ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Բաբկեն Թունյանը երեկ՝ ապրիլի 26-ին, «ՀՀ հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին նախագծի քննարկման ժամանակ տեղեկացրեց, որ առաջարկում է ավտոմեքենաների տարեկան գույքահարկը տեխզննման պահին վճարվի ոչ թե ամբողջական, այլ տվյալ պահի դրությամբ առկա պարտքի չափով:

«Երբ քաղաքացին մեքենան տանում է տեխզննման, համակարգը ստուգում է տվյալ մեքենայի հետ կապված նրա հարկային պարտավորությունները: Եթե տվյալ տարվա գույքահարկը քաղաքացին չի վճարել, ապա նա պարտավոր է վճարել այն ամբողջովին: Սա մեր քաղաքացիներին կազատի բազմաթիվ գլխացավանքներից, քանի որ երբեմն քաղաքացին ամբողջ տարվա գույքահարկը վճարում է տարվա սկզբին, բայց մեքենան վաճառում է ու ընկնում բազմաթիվ թղթաբանությունների մեջ»,- ասաց Թունյանը:

«Հիմա ենթադրենք մարդը ինչ-ինչ խնդիրներ է ունեցել եւ հաշիվները կալանքի տակ են ընկնում: Հիմա ինքն ուզում է իր մեքենայով տաքսի վարի, որ փող աշխատի՝պարտքերը փակի, ասում ենք՝չէ, մինչեւ պարտքդ չփակես, չենք թույլ տա տեխզննություն անցկացնել, այսինքն՝այդ մարդուն դատապարտում ենք հավերժ մնալ հարկադիր կալանքի տակ: Այդ նպատակահարմարությունը պետք է քննարկել»,-ասաց նա:

● Անցած 2 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

Career City Fest–Ի ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ

Career City Fest 2024-ին Իդրամն ու IDBank-ը կունենան իրենց տարբերվող ու նարնջագույն տաղավարները: Կարիերայի քաղաքում այս տարի նույնպես երկու օր շարունակ՝ ապրիլի 27-ին ու 28-ին, Դուք ունեք անկրկնելի հնարավորություն ծանոթանալու Իդրամի եւ IDBank-ի կորպորատիվ մշակույթին եւ իհարկե թափուր հաստիքներին:

Մեր տաղավարներում Դուք ոչ միայն կմասնակցեք տարբեր վիկտորինաների եւ կշահեք նվերներ, այլ որ շատ ավելի կարեւոր է՝ հնարավորություն կունենաք շփվելու անմիջապես Մարդկային ռեսուրսների կառավարման աշխատակիցների ու ղեկավարների հետ, նրանց ուղղել հարցեր եւ ստանալ արժեքավոր խորհուրդներ Ձեր կարիերայի համար:

Ի դեպ, CCF-ի ընթացքում հնարավորություն կունենաք առավել մանրամասն ծանոթանալու IDBank-ի IDream ծրագրի հետ եւ անգամ դիմելու առաջիկա IDream 11-ին մասնակցելու համար:

Նշենք, որ թե՛ Իդրամը, թե՛ IDBank-ը մեծապես կարեւորում են իրենց աշխատակիցների համար լիարժեք ու հարմարավետ աշխատանքային պայմանների ստեղծումը եւ, իհարկե, առաջարկում են արտոնությունների մի ամբողջ փաթեթ: Բացի այդ, մեզ համար անչափ կարեւոր է մեր աշխատակիցների մասնագիտական աճը, ու լինելով IDBank-ի կամ Իդրամի աշխատակից՝ Դուք կունենանք վերապատրաստման եւ մասնագիտական աճի մեծ հնարավորություններ:

Եվ, այսպես, սպասում ենք Ձեզ մեր տաղավարներում, որ միասին բացահայտենք մասնագիտական նոր հնարավորություններով լի աշխարհը:

ԿԱՄԵՑՎԵԼ Է ԱՊՕՐԻՆԻ ՀՈՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները ջրային ռեսուրսների վերահսկողության ընթացքում Արմավիրի մարզի Արաքս եւ Արարատի մարզի Մասիս համայնքներում արձանագրել են ապօրինի ջրօգտագործման դեպքեր:

Պարզվել է, որ քաղաքացիներ Խ.Կարապետյանն ու Գ.Պողոսյանը ձկնաբուծության նպատակով ապօրինի ջրառ են կատարել տարածքում ինքնաշատրվանող եւ խորքային 2-ական հորերից:

Տեսչական մարմնի տարածքային բաժինների պետերի որոշումներով կասեցվել է առանց համապատասխան թույլտվության 4 հորի շահագործումը:

Իրավախախտները ենթարկվել են վարչական պատասխանատվության:

Ներկայացվել են պատճառված վնասների փոխհատուցման պահանջներ:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ՝ ՀԱՄԱԿԱՐԳ

ՊԵԿ-ը պարզաբանում է ներկայացրել, թե ինչպես օտարերկրյա քաղաքացիները պետք է մուտք գործեն «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ»:



Ինչպե՞ս մուտք գործել համակարգ «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ» մուտքն օտարերկրյա քաղաքացիների համար իրականացվում է հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ), օգտվողի անուն եւ գաղտնաբառի միջոցով: Համակարգի հասանելիությունը տրամադրվում է ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության կողմից:

Ո՞ր տեսակի էլեկտրոնային ստորագրությունն է գործում

Համակարգում օտարերկրյա քաղաքացիների համար գործում է երկու տեսակի ստորագրություն՝ CoSign ՀԾՀ-ով եւ CoSign ՀՎՀՀ-ով տեսակները, որոնք տրամադրում է «Էկենգ» ՓԲԸ-ն: CoSign ՀՎՀՀ-ով տեսակի էլեկտրոնային ստորագրությունը տրամադրվում է հետեւյալ դեպքերում՝ եթե օտարերկրյա քաղաքացինի չունի հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), եթե օտարերկրյա քաղաքացին, անկախ ՀԾՀ ունենալու հանգամանքից, չի գտնվում ՀՀ-ում:

Մնացած բոլոր դեպքերում տրամադրվում է CoSign ՀԾՀ-ով տեսակի էլեկտրոնային ստորագրություն:

Ի՞նչ անել նախքան ստորագրության ձեռքբերումը

CoSign ՀՎՀՀ-ով տեսակի էլեկտրոնային ստորագրությունը ձեռք բերելու համար օտարերկրյա քաղաքացին նախքան «Էկենգ» ՓԲԸ-ին դիմելը, պետք է հաշվառվի հարկային մարմնում (ձեռք բերի ՀՎՀՀ) եւ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության կողմից ստանա «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ» մուտքի թույլտվություն:

Ինչպե՞ս ստանալ համակարգի հասանելիություն

Եթե քաղաքացին ունի ՀՎՀՀ, ապա անհրաժեշտ է www.e-request.am հարթակի միջոցով ՊԵԿ ուղարկել դիմում՝ կցելով անձը հաստատող փաստաթուղթ (Ձեւաչափ 1), որից հետո իր էլեկտրոնային հասցեին կուղարկվի համակարգի հասանելիությունն ստանալու հղում: Անցնելով հղմամբ՝ անհրաժեշտ է գրանցվել եւ ընտրել օգտվողի անունը եւ գաղտնաբառը:

Միաժամանակ, եթե օտարերկրյա քաղաքացին չունի ՀԾՀ կամ չի գտնվում ՀՀ-ում, ապա համակարգի հասանելիություն ստանալու համար դիմումի մեջ պետք է կատարի նաեւ նշում՝ Cosign ՀՎՀՀ-ով ստորագրության տեսակի տրամադրման անհրաժեշտության վերաբերյալ (Ձեւաչափ 2): Անհրաժեշտ է հիշել, որ համակարգի հասանելիությունը ստանալուց հետո անհրաժեշտ է ձեռք բերել Cosign տեսակի էլեկտրոնային ստորագրություն՝ դիմելով www.ekeng.am «Էկենգ» ՓԲԸ-ին:

Ինչպե՞ս ձեռք բերել ՀՎՀՀ

Եթե օտարերկրյա քաղաքացին չունի ՀՎՀՀ, ապա www.e-request.am համակարգի միջոցով անհրաժեշտ է ուղարկել ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի հարկ վճարողի հաշվառման համար ստանալու դիմում՝ կցելով անձը հաստատող փաստաթուղթը: Մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային հասցեին կստանա ՀՎՀՀ-ն, որից հետո համակարգի հասանելիությունն ստանալու դիմումը կարող է ներկայացնել նույն հարթակի միջոցով՝ վերը նշված եղանակով:

Իսկ ՀԾՀ ունեցող օտարերկրյա քաղաքացին ՀՎՀՀ ստանալու դիմումը կարող է ներկայացնել նաեւ առցանց՝ Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային https://file-online.taxservice.am համակարգի միջոցով, որի ներկայացման համար էլեկտրոնային ստորագրությունը պարտադիր չէ:

ՋԱՐԳԱՑՈՒՄ

ԲԱՆԿԻ ԱՌԱՋԻՆ ՎԻՐՏՈՒԱԼ ՏԱՐԱԾՔԸ

«Ֆասթ բանկ» արդեն վիրտուալ աշխարհում է եւ հասանելի է բոլորին հայկական ամենաթրենդային տիրույթում՝ Ֆասթեքսվերսում: Այս քայլով բանկն իր հաճախորդներին է առաջարկում բանկային ծառայություններից օգտվելու նոր՝ ժամանակակից փորձառություն:

Ֆասթ Բանկի վիրտուալ տարածքը՝ Fspace-ը, բանկի հաճախորդների եւ, մասնավորապես, երիտասարդների այն սեգմենտի համար է, որն ակտիվ օգտվում է համացանցից եւ պատրաստ է թվային փոխակերպման, բարձր է գնահատում նորագույն տեխնոլոգիաները եւ, անշուշտ, ուզում է առանց որեւէ տեղ շտապելու եւ ավելորդ ժամանակ ծախսելու՝ աշխարհի ցանկացած վայրից, ցանկացած պահի հայտնվել Բանկում:

Fspace-ում Ֆասթ Բանկի աշխատակիցների, ավելի ճիշտ՝ նրանց ավատարների հետ հաճախորդները կարող են հաղորդակցվել private talk-ի միջոցով՝ զանգով:

Հնարավորություն կա նաեւ այդ պահին տարածքում գտնվող մարդկանց հետ խոսել publiã talk-ով կամ հաղորդագրություն գրելու միջոցով: Ի դեպ, օգտատերերը եւս կարող են ստեղծել իրենց սեփական ավատարները:

Բանկի թվային տարածքում հայտնվելու համար անհրաժեշտ է ներբեռնել Fastexverse հավելվածը կամ գրանցվել կայքում, այնուհետեւ գրանցումը հաստատելուց հետո տեղափոխվել community բաժին եւ այնտեղ գտնել Fspace-ը:

Բանկը նպատակ ունի ապագայում զարգացնել Fspace-ն՝ ավելացնելով նոր հնարավորություններ:

ԲԱՆԿԸ ՄԻԱՑԵԼ Է Career City Fest–ԻՆ

«Կոնվերս բանկը» մասնակցելու է ապրիլի 27-28-ը կայանալիք Career City Fest-ին՝ ներկայացնելով Բանկի HR բրենդը եւ թափուր հաստիքները:

Բացի աշխատանքի հնարավորությունների մասին տեղեկատվությունը, Կոնվերս Բանկի տաղավարի այցելուներին սպասվում են հետաքրքիր անակնկալներ, խաղեր, նվերներ: Կանցկացվի նաեւ մրցույթ, որի շրջանակում կխաղարկվի երկու iPhone 15, ինչպես նաեւ գրքեր:

«Սա հիանալի հնարավորություն է ներկայանալու որպես գործատու, հավաքագրելու հետաքրքրվածության հայտեր երիտասարդ մասնագետներից, ինչպես նաեւ հասկանալու Բանկի մրցունակությունն այս ոլորտում, անելիքները եւ սպասումները: Այս անգամ եւս ներկայացնելու ենք կարիերայի զարգացման հնարավորությունները, որպես գործատու կիսվելու ենք նոր արժեքներով ու այն մշակույթով, որը միավորում է բանկի աշխատակիցներին, մոտիվացնում ստեղծել նորն ու նպաստել ոլորտի զարգացմանը»,-ասել է «Կոնվերս բանկի» Մարդկային ռեսուրսների եւ կազմակերպական զարգացման դեպարտամենտի տնօրեն Շուշան Առաքելյանը:

«Կոնվերս բանկի» մրցակցային առավելություններից կարեւորվել է գործող խրախուսման լայն գործիքակազմը, այդ թվում՝ աջակցությունը աշխատակիցների վերապատրաստմանն ու մասնագիտական հմտությունների զարգացմանը, ինչպես նաեւ աշխատանքային ներուժի իրացման հավասար պայմանների ապահովումը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

«ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐ...»-Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Երեւանում եւ Դիլիջանում ապրիլի 29-ից մայիսի 16-ը կանցկացվի «Խաչմերուկներ. ժամանակակից երաժշտության օրեր Հայաստանում» 7-րդ միջազգային փառատոնը՝ «Հայկական խճանկար» խորագրով:

Ինչպես տեղեկացնում է ԿԳՄՍ նախարարությունը իր տարածած հաղորդագրությունում, փառատոնի նպատակն է ապահովել համաշխարհային ժամանակակից երաժշտության տարածումը եւ զարգացումը Հայաստանում՝ ծրագրում ներառելով մի շարք նոր ստեղծագործությունների հայաստանյան պրեմիերաներ:

Համերգները կանցկացվեն «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, Կամերային երաժշտության ազգային կենտրոնում, ՀԲԸՄ դահլիճում, Դիլիջանի միջազգային դպրոցում եւ The Office-ում:

Այս տարի ելույթ կունենան Անդրիուս Հարությունյանը, Գաշիա Ուզունյանը, Հայկ Մելիքյանը, «Ասոնանս» եւ Երեւանի պետական կոնսերվատորիայի Բումերանգ անսամբլները եւ «Երեւան» լարային քառյակը:

Ապրիլի 29-ին տեղի կունենա բացման համերգը «Առնո Բաբաջանյան» համերգասրահում: «Ասոնանս» անսամբլը կներկայացնի Արամ Հովհաննիսյանի, Ալիսիա Թերզյանի, Արթուր Ահարոնյանի, Արսեն Բաբաջանյանի, Ֆրանկ Քրիստոֆ Եզնիկյանի, Ստեփան Ռոստոմյանի ստեղծագործություններից:

Մայիսի 2-ին ՀԲԸՄ դահլիճում Երեւանի պետական կոնսերվատորիայի «Բումերանգ» անսամբլը կներկայացնի Միքայել Մելիք-Վարդանյանի, Լեւոն Պողոսյանի, Վահրամ Բաբայանի, Նարինե Մխիթարյանի, Ռալֆ Քյոշքերյանի, Արամ Սաթյանի, Գոռ Իսպիրյանի, Վաչե Շարաֆյանի գործերից:

Մայիսի 4-ին Դիլիջանի միջազգային դպրոցում (UWC Dilijan) Երեւանի պետական կոնսերվատորիայի «Բումերանգ» անսամբլը կկատարի Միքայել Մելիք-Վարդանյանի, Ռալֆ Քյոշքերյանի, Գոռ Իսպիրյանի, Լեւոն Պողոսյանի եւ Նարինե Մխիթարյանի գործերից:

Մայիսի 7-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը դաշնակահար, ՀՀ վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանը կներկայացնի հեղինակային, ինչպես նաեւ Ալան Հովհաննեսի, Գեղունի Չթչյանի, Տիգրան Մանսուրյանի, Մարտուն Իսրայելյանի, Վարդան Աճեմյանի, Արթուր Ավանեսովի, Ռուբեն Անտոնյանի, Էլեն Յոլչյանի ստեղծագործություններից:

Մայիսի 11-ին Առնո Բաբաջանյան համերգասրահում «Երեւան» լարային քառյակը կկատարի Սուրեն Զաքարյանի, Աննա Հակոբջանյանի, Արփինե Կալինինայի, Միխայիլ Կոկժաեւի գործերից:

Մայիսի 14-ին փառատոնային կրթական ծրագրերի շրջանակում երաժշտագետ, ձայնային տեսաբան Գաշիա Ուզունյանն Ակուստիկ լաբորատորիայում վարպետության դաս կանցկացնի կոնսերվատորիայի ուսանողների համար:

Մայիսի 16-ին The Office-ում կայանալիք համերգում կմիավորվեն էլեկտրոնային եւ դասական երաժշտությունը՝ Անդրիուս Հարությունյանի ղեկավարությամբ: Կհնչեն Սերգեյ Ումրոյանի եւ Անդրիուս Հարությունյանի ստեղծագործություններից:

Փառատոնի ծրագիրն ամեն տարի հնարավորություն է ստեղծում հայ երաժշտասեր հասարակության համար մշտապես տեղեկացված լինելու արդի ժամանակակից դասական երաժշտության զարգացումներին եւ միտումներին, ինչպես նաեւ նպաստում է նոր ստեղծագործությունների ստեղծմանը:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՊԱՇՏՊԱՆԵՆ ԱԲ-Ի ՄԻՋՈՑՈՎ

Սան Պաուլոյի համալսարանի բրազիլացի գիտնականները մշակել են արհեստական ինտելեկտի (AI) գործիք՝ ճանապարհների վրա վայրի կենդանիներին հայտնաբերելու եւ նրանց հետ կապված վթարների թիվը նվազեցնելու համար: Հետազոտությունը հրապարակվել է Scientific Reposts (SciRep) գիտական ամսագրում:

Բրազիլիան աշխարհում ամենահարուստ կենսաբանական բազմազանությունն ունի: Երկրում մեքենաների պատճառով ամեն վայրկյան սպանվում է մոտ 16 վայրի կենդանի, իսկ մեքենաների զոհ դարձող ողնաշարավորների թիվը ամեն տարի մոտենում է 475 միլիոնի:

Հետազոտողները ստեղծել են տվյալների բազա՝ հինգ տեսակի կենդանիների հազարավոր պատկերներով, որոնց պարբերաբար հարվածում են մեքենաները:

Մասնագետները արհեստական ինտելեկտին վարժեցրել են ներկայացված կենդանիներին իրական ժամանակում ճանաչելու համար: Այնուհետեւ նրանք փորձարկել են համակարգը՝ ապացուցելու դրա արդյունավետությունը:

Թիմը հույս ունի դիմել տեխնոլոգիական ընկերությունների օգնությանը՝ իր նեյրոնային ցանցը Բրազիլիայի ճանապարհային հսկողության համակարգերում ներդնելու համար: Եթե դա հնարավոր լինի անել, ապա արհեստական ինտելեկտը կկարողանա վարորդներին զգուշացնել ճանապարհին վայրի կենդանու հայտնվելու մասին՝ ծանուցումներ ուղարկելով նավիգացիոն ծրագրին: Գործիքը կարող է նաեւ պաշտպանել մարդկանց խոշոր գիշատիչների հետ հանդիպումից:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՒՄ

Կառավարության որոշմամբ, փոփոխություն է կատարվել բուհերի ընդունելության կարգում՝ պայմանավորված հանրակրթության նոր չափորոշչի ներդրմամբ: Բուհերի ընդունելության նոր կարգով սահմանված հնարավորությունն այս տարի կամավոր ընտրության հիմունքով կկիրառվի Տավուշի մարզի շրջանավարտների համար, որոնք նոր չափորոշչով առաջինն են ավարտելու դպրոցը: Հետագայում, տվյալների ամփոփումից եւ վերլուծությունից հետո, նոր համակարգը կներդրվի բոլոր դպրոցների համար:

Ինչպես հայտնի է, Տավուշի մարզում 2021/22 ուսումնական տարվանից փորձարկվում է հանրակրթության պետական նոր չափորոշիչը, եւ այս ուսումնական տարում արդեն կլինեն նոր չափորոշչով իրենց ուսումնառությունն ավարտող առաջին շրջանավարտները:

«Ընդունելության կարգում իրականացվող փոփոխությունները մեր առաջին շրջանավարտներին թույլ կտան բուհ դիմել ընդունելության նոր համակարգով: Մասնավորապես՝ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտների համար կսահմանվեն բուհերի ընդունելության նոր հնարավորություններ. սա հանդիսանում է նաեւ կրթության ոլորտում բարեփոխումների կարեւոր բաղադրիչ, որի համաձայն՝ նոր կրթական չափորոշիչներով ուսումնառության ավարտին դպրոցի ավարտական քննությունները կհանդիսանան նաեւ բուհի ընդունելության քննություն»,- ասել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

ԳԻՏԱԿԱՆ

ՀՈՒՇԱԳԻՐ՝ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հունաստանի մայրաքաղաք Աթենքում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը եւ Աթենքի Ակադեմիայի նախագահ, պրոֆեսոր Ստամատիոս Կրիմիզիսը ստորագրեցին համագործակցության հուշագիր: Հուշագրի ստորագրման հանդիսավոր արարողությանը ներկա էին Հունաստանի նախկին նախագահ, Աթենքի Ակադեմիայի անդամ, պրոֆեսոր Պրոկոպիոս Պավլոպուլոսը, Հունաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանը, Աթենքի Ակադեմիայի նախկին նախագահ Միխաիլ Ստաթոպուլոսը եւ Աթենքի Ակադեմիայի գլխավոր քարտուղար Խրիստոս Ջերեֆոսը: Համագործակցության շրջանակում նախատեսվում է իրականացնել համատեղ գիտահետազոտական ծրագրեր, կազմակերպել գիտաժողովներ, կոնգրեսներ, աշխատաժողովներ, ամառային դպրոցներ, նաեւ համատեղ իրականացնել գիտնականների փոխանակման ծրագրեր եւ գիտական նյութերի հրապարակումներ: Նախատեսվում է նաեւ համատեղ միջոցառումների իրականացում՝ ուղղված գիտության դերի մասին հասարակական կարծիքի ամրապնդմանը: Համագործակցությունը կներառի մի շարք ոլորտներ՝ մաթեմատիկա, ինֆորմատիկա եւ ճարտարագիտություն, մեխանիկա, նոր նյութեր եւ առաջադեմ տեխնոլոգիաներ, կյանքի որակ, կենսաբժշկություն եւ կենսատեխնոլոգիա, կենսաբազմազանություն, կենսառեսուրսներ եւ էկոլոգիա, կլիմայի փոփոխություն, բնական եւ տեխնածին աղետներ, աստղագիտություն, տիեզերական հետազոտություն եւ տեխնոլոգիա, պատմամշակութային ժառանգություն եւ ազգային ինքնություն, մարդ եւ հասարակություն:

ՄՈՍԿՈՎՅԱՆ ԴՊՐՈՑԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մոսկվայի Չեխովի անվան գեղարվեստական ակադեմիական թատրոնի (ՄԽԱՏ) դպրոց-ստուդիան, որի ղեկավարը մանկավարժ, ռեժիսոր Վիկտոր Ռիժակովն է, մայիսի 7-ին հանդես կգա Երեւանում: Դպրոց-ստուդիան Երեւանի Հովհ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի բեմում կներկայացնի «Բի-Դուբի-Բուի գաղտնիքը» մանկական երաժշտական ներկայացումը (բեմադրությունը՝ Տատյանա Բուրելի): «Բի-Դուբի-Բուի գաղտնիքը» զարմանահրաշ ճամփորդություն է դեպի կախարդական աշխարհ: Ներկայացման հերոսները ոչ միայն հրաշալի երգում ու պարում են, այլեւ տարբեր երաժշտական գործիքներ են նվագում: «Բի-Դուբի-Բուի գաղտնիքը» պարզապես ներկայացում չէ, այն իսկական հոգեբանական եւ թերապեւտիկ հեքիաթ է, որը թեԲ մեծերին, թեԲ փոքրերին անմոռանալի պահեր կպարգեւի: Վիկտոր Ռիժակովի արվեստանոցը բազմաթիվ նախագծերում եւ փառատոններում գրավել է հանդիսատեսի սրտերը: Նրանց աշխատանքներն արժանացել են հանրության եւ մասնագետների ուշադրությանը: Դպրոց-ստուդիան Երեւանում հանդես կգա «Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնի նախաձեռնությամբ:

● *Ապրիլի 30-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Համլետ» ներկայացումը՝ ըստ Շեքսպիրի համանուն պիեսի: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է աշխատել որպես ուսուցիչ:
Աննա Ստեփանյան (26 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:
Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաեւ՝
1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող եւ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,
2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

ՕՐԵՆՔ

ՀԱՐՑ. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո տրամադրվու՞մ է արդյոք դրա կրկնօրինակը:
Արամ Գաբրիելյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

ՀՀ կառաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդ որում՝ մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Վիրտուոզ դաշնակահար, ջազ երաժիշտ, կոմպոզիտոր Տիգրան Համասյանը «Թագավորություն» սինգլով ազդարարել է «Հազարան բլբուլ» նախագծի մեկնարկի մասին: Նախագծի ոգեշնչման աղբյուր է հանդիսացել հայ բանաստեղծ Սերիների «Հազարան բլբուլ» պոեմը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 6 + 9 +23 + 27
Կոտայքի լեռներ	+ 6 + 9 +23 + 25
Կոտայքի նախալեռներ	+11+ 13 +24 + 28
Գեղարքունիք	+ 4 + 8 +21 + 24
Լոռի	+ 6 + 10 +24 + 27
Տավուշ	+10 + 15 +26 + 29
Արագածոտնի լեռներ	+ 6 + 8 +22 + 24
Արագածոտնի նախալեռներ	+10 + 14 +24 + 29

Արարատ	+13 + 15 +30 + 33
Արմավիր	+11 + 13 +30 + 32
Վայոց ձորի լեռներ	+ 5 + 8 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+12 + 14 +30 + 32
Սյունիքի հովիտներ	+13+ 16 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 7 + 11 +23 + 26
ԼՂՀ	+ 7 + 10 +22 + 25
Երեւան	+ 11 + 13 + 26 + 29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.4.2024**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*